Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի << Խոյի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն՝

1. Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

ա) բարձրագույն կրթություն.

բ) հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ

2. Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

ա) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

բ) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

գ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

դ) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.

ե) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

զ) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

3. Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը՝

ա) ով դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ վերացված չէ.

բ) ում օրենքով արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել կամ ով զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

գ) ով նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար.

դ) 65 տարին լրացած քաղաքացիները.

ե) ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում սույն կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար դիմող քաղաքացիները Խոյի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն՝

ա) Դիմում,

բ)մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,
գ) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին,
դ) ինքնակենսագրություն,
ե) անձնագրի, բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի, արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակները և պատճենները,
զ) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից,
է) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 09:00-18:00-ն, բացի շաբաթ, կիրակի
և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը կանցկացվի 2025 թվականի հունիսի 26-ին ժամը 12:00-ին, Արմավիրի մարզի Խոյ համայնքի Աղավնատուն գյուղում: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2025 թվականի հունիսի 11-ը մինչև ժամը 18:00-ն: Կազմակերպության գտնվելու վայրը և հեռախոսահամարը՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք: Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները այլ տեղեկությունների և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Խոյի համայնքապետարանի աշխատակազմ /գ.Գեղակերտ, Մ. Մաշտոց 30, հեռ. բջջ.(060-888-999):